

### ՀԱՅԵՐԸ ՌՈՒՄԱՆԻՈՅ ՄԷՉ

Գրեց՝ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԼՈՒԽ Է.

#### ԿՏՐԻՃՎՈՐԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ

**Շ**ԱՏ շահեկան էջ մըն է աս ուսմանահայ գաղութի պատմութեան մէջ: Անիկա կը պարզէ մէկ երեսը այս գաղութի ընկերային կեանքին ու բարքերուն՝ ի վեր հանելով անոնց մէկ շատ բնորոշ գիծը: Ան կը բացատրէ միւս կողմէ թէ այս գաղութը ինչո՞ւ միւսներէն քիչ մը աւելի դիմացաւ: Եւ դարձեալ ուշագրաւ է այն տեսակէտէն, որ այն կաղմակերպութիւնները, որոնց մասին պիտի խօսինք այս գլուխին մէջ, տեսակ մը Պատանեկան Ուխտեր էին, տեսակ մը սկաուտներ՝ Պէյտըն Փառէլէն երեք հարիւր տարի առաջ: Ու ի՞նչ լաւ պիտի ընէին մեր հայ սկաուտները՝ եթէ որդեգրէին «կարիճ» բառը...

#### «ԿՏՐԻՃՆԵՐՈՒ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ»ՆԵՐԸ

Այս անունով կը կոչուին այն երիտասարդական կաղմակերպութիւնները, որոնք գոյութիւն ունեցան Կալիֆորնիայի, Պուրթո՛րիկայի, Մոլտավիոյ եւ Թրանսիլվանիոյ մէջ ԺԷ., ԺԸ. եւ ԺԹ. դարերուն, եւ որոնք իրենց յարատեւութեամբ բացառիկ երեւոյթներ են հայ կեանքին համար, իսկ իրենց ոգիովն ու հետապնդած նպատակովը նոյնիսկ արժանի են միջազգային հետաքրքրութեան:

Իրերօգնութեան, այլասիրութեան տաք բլիջներ են անոնք, որոնք պատիւ կը բերեն զանոնք ծնող ցեղին: Տկարին, աղքատին, աննեցուկին օգնելու ուխտը, իրարու հրճուանքն ու սուգը բաժնելու նախանձախնդրութիւնն էր անոնց հիմնական ոգին, այնպիսի դարերու ու այնպիսի միջավայրերու մէջ, ուր շնչէին իսկ դժուար էր յաճախ եկուոր տարբերուն համար:

Անոնք «կարիճվորաց Եղբայրութիւն» կոչուին, «Պրաստավա» թէ «Պատանեկան Ընկե-

րութիւն» նոյնն են ոչ միայն իրենց ոգիովը, այլ նաեւ իրենց կաղմակերպութեամբը, ինչ պետութեան սահմանի մէջ ալ ըլլան, եւ ինչ ալ ըլլայ գիրենք հովանաւորող իշխանութիւնը, — էջմիրածի՞նք թէ Հոռոմը:

«Կարիճ» քաջի իմաստ ունի, եւ այդ ալ պէտք է եղած ըլլայ եղբայրութեանց առաջին իմաստը: Վերջն է որ «կարիճ» բառը հոմանիչ դարձած է պատանիի, երիտասարդի, որովհետեւ ամէն հայ պատանի ստիպուած էր մտնել Կարիճներու Եղբայրութեանց մէջ: Նոյնիսկ Մոլտավիոյ կողմը հին տեղացի հայերը «կրտրիճ» կ'ըսէին մանչ տղուն: Անգամ մը «քանի՞ զաւակ ունիս» հարցուցի Մոլտավահայու մը: «Մէկ աղջիկ եւ երկու կարիճ ունեցել եմ» եղաւ իր պատասխանը:

Կամենիցի Տարեգիրքը (էջ 111) արձանագրելով 1652-ին Բան Թորոսի որդի Բան Եագուպի մահը՝ կ'աւելցնէ. «Աստուած ողորմի իւր կարիճ հողոյն»: Անշուշ կ'ակնարկէ անոր մատաղ տարիքին:

#### «ԿՏՐԻՃ»ՆԵՐԸ ԼԵ ՀԱՍՏԱՆԻ ՄԷՉ

Հայ եղբայրակցութիւններ կային Լեհաստանի մէջ ԺԷ. դարուն:

Թէ ուրկէ՞ ծագում առաւ անոնց գաղափարը: Արդեօք հայերը Խրիմէն ու Անիէն հետերնի՞ն բերին թէ՛ ծնունդ առաւ տեղական պայմաններէ: Դժբախտաբար տուեալներ չունինք հարցը լուսարանելու համար:

Սա ստոյգ է որ Լեհաստանի հայերը տանրեօթերորդ դարու սկիզբն իսկ եղբայրութիւններ կաղմած էին արդէն: Նիկոլ Թորոսովիչէ կալիսկոպոսը, որ յետոյ հայ ժողովուրդը կաթոլիկութեան գիրկը նետեց, եղաւ անոնցմէ ոմանց հիմնողը:

Կամենիցի Հայոց Տարեգիրքը (Յաւելուած 2., էջ 143) կ'ըսէ թէ 1675-ին Նիկողայոս արքեպիսկոպոսը, Ս. Ժողովին թոյլտուութեամբը, կ'ընտրէ եւ կը ձեռնադրէ իբր իրեն յաջորդ